Société Evangélique de France և Oeuvre de Propagande évangélique de Pons, որոնց գործունէութեան շրջանում գտնուում են տասնեակ նահանգներ։ Դրանք ունին իրանց համար յատուկ օրաթերթեր և քանի գնում զօրանում են Ֆրանսիայի նման մի կաթոլիկ աշխարհում։

ՀԱԲԷՇՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ.

Ինչպէս յայտնի է Հաբէշների եկեղեցին գտնուում է Կոպտական պատրիարքի հոգևոր իրաւասութեան ներքոյ, և նորա եպիսկոպոսը ձեռնադրուում է այս եկեղեցւոյ պետից։ Վերջերս Կահիրէ է գնացել պատրիարքի մօտ Հաբէշների Մատթէոս եպս., որպէս զի հաստատուի Եթոպիոյ արքեպիսկոպոս կամ պատրիարք։ Սակայն Կոպտական պատրիարքի կարծիքով այդ աստիճանը վայել է միայն Պետրոս եպ. Աբունին, որը եղել է Հաբեշստանի եպիսկոպոս դեռ ևս Յովհաննէս կայսեր օրով և այժմ էլ կենդանի է։ Բայց Աբունան Անգլիացւոց կողմի մարդ լինելով՝ լաւ յարաբերութեան մէջ չէ Նեգուս Մենելիքի հետ։ Այս տարաձայնութիւնը Մենելիքի և Կոպտական պատրիարքի մէջ կարող է հերձուած յառաջ բերել, և այդ կողմից, ինչպէս երևում է, մի քանի քայլ արդէն արուած է։ Մատթէոս եպս. գնացել է Երուսաղէմ և այնտեղ ձեռք է բերել Հաբէշների համար մի տաճար ս. Կոստանդինի և ս. Հեղինէի անունով։ Մինչև այժմ Հաբէշները Երուսաղէմում ոչ մի տաճար չունէին. այժմ ոչ միայն տաճար ունին, այլ և աշխատում են աւելի հիմնաւոր կերպով հաստատուել այնտեղ և հիմնարկել են Հաբէշների վանք ու հիւրատուն։ Որովհետև Հաբէշների գնած տաճարը գտնուում է ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթուղիկոսի գերիշխանութեան ներքոյ, ուստի Հաբէշները յոյս ունին, թէ այդպէս նոքա օրինաւոր կերպով կազատուեն Կոպտական պատրիարքից կախում ունենալուց։